ՄԻԱԿ ՈՒՂԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Ամեն ինչին այժմ նայում ենք նոր հայացքով, ամեն ինչ գնահատում ու չափում ենք միանգամայն այլ մտածողությամբ ու հոգեբանությամբ: Կյանքի ոչ մի ոլորտ դուրս չի մնում նորի քննությունից, և այդ իրողության մեջ ենք տեսնում մեր առաջադիմության նախապայմաններից մեկը: Իսկ երբ հարցը վերաբերում է մասնավորապես ժողովրդական տնտեսությանը, առավել ենք ունենում թարմ, չկրկնված մոտեցումներ ցուցաբերելու պատճառներ, որովհետև հենց տնտեսական բնագավառն է մեր երկրի, յուրաքանչյուր հանրապետության ու երկրամասի ամենախոցելի ու ցավոտ կողմը, աքիլլեսյան գարշապարը:

Ինչպե՞ս խուսափել դրա գոյությունից. այս հարցը ամբողջ հրատապությամբ է ծառացած նաև Արցախի առջև: Մասնագետները պրոբլեմի լուծումը տեսնում են տնտեսական ինքնուրույնության և հզոր ու շահութաբեր արտադրություններ ստեղծելու մեջ՝ դրանում վճռական դեր հատկացնելով տեղական արդյունաբերությանը: Խոր տնտեսագիտական գիտելիքներ ունենալ պետք չէ՝ ըմբռնելու համար, որ նախ և առաջ շահութաբեր է տնտեսական այն միավորը, որ ստեղծված է հումքի սեփական բազայի վրա, սեփական հնարավորություններով: Այս առումով է տեղական արդյունաբերության նշանակությունը մեծանում, վերածվում որոշիչ գործոնի:

ԼՂԻՄ-ի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները վերջերս մտել են մեկ ընդհանուր միավորման մեջ: Ինչո՞վ էր պայմանավորված միավորման ծնունդը, այսօր ինչպիսի՞ արտադրություններ կան նրա կազմում. այս հարցերի պարզաբանմամբ սկսվեց մեր զրույցը միավորման գլխավոր դիրեկտոր ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ հետ:

— Միավորումը,— ասաց նա,— ստեղծվել է ձեռնարկության մասին պետական օրենքի համաձայն: Ստեղծվել է, որպեսզի, այսպես ասած, երրորդ աստիճան չլինի (մինչ այդ գործում էր ձեռնարկություն-վարչություն-մինիստրություն եռաստիճան կապը): Միավորումը կազմակերպվել է տնտհաշվարկի հիման վրա՝ նպատակ ունենալով լավագույն ձևով օգտագործել շահույթը: Ասենք, մինչև այժմ էլ այդ նպատակը իշխող է եղել: Շահույթի գումարներով է ստեղծվել, օրինակ, Ստեփանակերտի արտադրական կոմբինատը, որը հիմա տարեկան տալիս է 7 միլիոն ռուբլու արտադրանք: Ի դեպ, վերջերս այս ձեռնարկությունը միացել է Հայաստանի թեթև արդյունաբերության մինիստրության «Գարուն» միավորմանը, որը, կարծում եմ, գովելի քայլ է այն իմաստով, որ հնարավորություն կտա Ղարաբաղում զարգացնել կարի արտադրությունը: Մեր մյուս ձեռնարկությունը Ասկերանի սալիկների արտադրության գործարանն է: Այն շարք է մտել անցյալ տարվա ապրիլին: Հիմա այնտեղ աշխատում է 70 մարդ, որոնք կարող են թողարկել մինչև 30 հազար քառ. մետր արտադրանք: Նոր է նաև մետաղյա իրերի գործարանը, որի բազայի վրա ստեղծվել է միավորումը: Այս ձեռնարկությունը դեռ քիչ շահույթ է ստանում, բայց հետագայում կդառնա միավորման ամենահզոր ձեռնարկություններից մեկը: Գործարանը կվերանորոգի ոչ ընտանդարտ փայտամշակման հաստոցներ, կպատրաստի տարբեր սարքավորումներ: Նրա տարեկան հզորությունը շուտով կհասնի 3 միլիոն ռուբլու: Միավորման մեջ է մտել նաև Ստեփանակերտի կարի ֆաբրիկան: Այն ունի մեծ հնարավորություններ մարզի գյուղերում կարի արտադրություններ բացելու համար: Հզորությունը այժմ 4,5 միլիոն է, հետագայում պետք է հասցվի 10 միլիոն ռուբլու: Մյուս խոշոր ձեռնարկությունը Մարտակերտի փայտամշակման կոմբինատն է: Պարկետի արտադրությունն այստեղ կազմում է 190 հազար քառ. մետր: Դրանից 140 հազարը արտահանվում է Հայաստան և Հյուսիսային Կովկաս: Մարտակերտում կա և տակառների արտադրություն, որը, ներգրավելով միավորման մեջ, նպատակ ունենք ընդլայնել: Չէ՞ որ տակառներ հարկավոր են մարզի և Հայաստանի բազմաթիվ կազմակերպությունների: Վանք գյուղում կար կահույքի կոմբինատ, որը իր արտադրանքը հիմնականում տալիս էր Ադրբեջանի շրջաններին: Այդպիսի բան հիմա չի կատարվում: Կոմբինատն ընդգրկելով միավորման մեջ, որոշել ենք այնտեղ արտադրել դռներ ու պատուհաններ և ամբողջ արտադրանքը տալ Ստեփանակերտի և Հայաստանի շինարարական կազմակերպություններին: Եվ, վերջապես, ամենաերիտասարդ ձեռնարկության՝ Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղի կերամիկական գործարանի մասին: Այն ստեղծվել է ընթացիկ տարում՝ Հայաստանի տեղական արդյունաբերության մինիստրության օգնությամբ: Դա էլ մտել է մեր միավորման մեջ:

— Ասացիք, որ «երրորդ աստիճանը» վերացել է: Խնդրում եմ փակագծերը բացել:

— Միավորումը անկախ կազմակերպություն է: Նա իր աշխատանքները կազմակերպում է ինքնուրույն և ենթարկվում միայն մարզային վերադաս կազմակերպություններին: Ադրբեջանի տեղական արդյունաբերության մինիստրությանը այլևս հաշվետու չենք: Մեզ, մեծ աջակցություն է ցույց տալիս Հայաստանի տեղական արդյունաբերության մինիստրությունը, օգնում և՛ հումքով, և՛ նյութերով, և՛ մասնագիտական հարցերով: Մենք դիմել ենք այդ մինիստրությանը, որպեսզի մեզ ընդունի իր կազմում: Առաջիկայում այդ հարցը, կարծում եմ, կլուծվի դրականորեն: Այդ դեպքում մարզի տեղական արդյունաբերության համար կբացվեն զարգացման նոր հորիզոններ: Այսպես, թե այնպես՝ մարզի տեղական արդյունաբերությունը թոթափել է տարիներով իրեն արգելակող կապանքները: Ազատ և սեփական ծրագրերով գործելը մեր ձեռնարկություններին նոր լիցք ու եռանդ է տալիս: Արդյոք հնարավո՞ր կլիներ նախկին պայմաններում հիշատակված Դրախտիկի կերամիկական գործարանի ծնունդը: Միավորման ղեկավարությունը անվարան ասում է՝ ոչ: Արդյոք հնարավո՞ր կլիներ Հայաստանի հետ համագործակցելը, ինչը ոչ միայն շահութաբեր է, այլև բարոյական մեծ խթանիչ: Կրկին ասում ենք՝ ոչ: Ահա թե ինչ է նշանակում ծանր կապանքներից ազատվել, ինչ է նշանակում գործել ինքնուրույն:

— Իսկ ինչպե՞ս և ինչքանո՞վ են միավորման ձեռնարկությունները օգտվում տեղի ռեսուրսներից ու հումքից:

— Տեղական հումքի օգտագործումը մեր հիմնական նպատակն է: Մենք առայժմ թողարկում ենք համեմատաբար քիչ արտադրանք, բայց արտադրության ծավալը բազմապատկելու համար ունենք որոշ նախադրյալներ: Դրանք են՝ կերամիկական գործարանը նախատեսված հզորությանը հասցնելը, սալիկների արտադրության, խաղալիքների թողարկման ծավալի ընդլայնումը և այլն: Միավորման արտադրանքի 16 տոկոսն այժմ ստացվում է տեղական հումքից, այն դեպքում, երբ միութենական ցուցանիշը հավասար է 10 տոկոսի: Շատ կարևոր է արտադրական թափոնների օգտագործման հարցը: Եթե մեր բոլոր ձեռնարկությունների թափոններն օգտագործենք, ապա տարեկան լրացուցիչ կստանանք մեկ միլիոն ռուբլուց ավելի արտադրանք, կունենանք մեծ շահույթ: Ընդհանրապես, մարզի տնտեսական ոլորտում սկսվել են կատարվել հաճելի փոփոխություններ: Հուսանք, որ այդ միտումը կշարունակվի և կնպաստի ԼՂԻՄ-ի հիմնական՝ քաղաքական պրոբլեմի լուծմանը:

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ